ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 նոյեմբերի 2019թ. թիվ 635-Ա

«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՐՅԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆ» ՓԲԸ-ԻՆ «ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԾՆՆԴԱՏԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻՑ ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1425-Ն որոշման 1-ին կետի 2)-րդ ենթակետի «զ» պարբերության պահանջների՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (փոխատու կողմ) ծննդատան մասնաշենքից անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով շուրջ 345 քառ. մետր մակերեսով տարածքը տրամադրել «Լոռու մարզային արյան փոխներարկման կայան» փակ բաժնետիրական ընկերությանը:

2. Մինչև ս/թ դեկտեմբերի 31-ը ազատել և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին հանձնել «Լոռու մարզային արյան փոխներարկման կայան» փակ բաժնետիրական ընկերության՝ 214,64 քառ. մետր մակերեսով տարածքով շենքը՝ սպասարկման համար անհրաժեշտ 0,02334 հեկտար հողատարածքով:

3. «Լոռու մարզային արյան փոխներարկման կայան» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝

ազատվող մասնաշենքի հաշվեկշռային արժեքների չափով, բաժնետոմսերի ձեռքբերման և մարման միջոցով, նվազեցնել ընկերության կանոնադրական կապիտալի չափը:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Մխիթարյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ